

ԼԻԱՆԱ ՕՀԱՆՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԽՈՂԻԿՅԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ-ԴԻՏԱՆԿՑՈՒՆԱՅԻՆ ԵՎ
ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՄԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹՈՒՄ»
(2018-2024 թթ.)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i70.190

ԱՄՓՈՓՈՒՄ

Արդի հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, թարգմանիչ, «Գրական թերթի» գլխավոր խմբագիր Կարինե Խողիկյանը բազմիցս անդրադարձել է հայ ժամանակակից գրականության, մշակույթի, արվեստի և իհարկե, քաղաքական և ազգային (արտագաղթ, եղեռն) հիմնախնդիրներին, որոնք բարձաձայնվել են տարիներ ի վեր իր՝ խմբագրական և մշակութային մի շարք հոդվածներում: Վերջին տարիներին՝ հատկապես 2018-2024 թթ., դրանք հիմնականում արտացոլվել են «Գրական թերթի» տարբեր համարներում՝ ելնելով ժամանակի և ազգագոյության քաղաքական իրավիճակի հրամայականներից:

Սույն հոդվածում ներկայացված են և վերլուծված Խողիկյան հրապարակախոսի՝ խնդրո առարկա ժամանակահատվածի բոլոր հոդվածները, որոնք ունեն քաղաքական, ազգային, բնապահպանական, մշակութային և այլ թեմաների շուրջ քննարկումային ու դիտանկյունային բնույթ, ինչպես նաև արձարծում են մեր օրերի մարդուն հուզող այժմեական հիմնախնդիրները և ժամանակի իրադարձությունները: Այդ հոդվածային հաղորդումներն էլ Կ. Խողիկյանի ստեղծագործության մաս են կազմում՝ ամբողջացնելով գրող-մշակութաբանի գրական-գեղարվեստական նկարագիրը:

Բանալի բառեր և արտահայտություններ. Կարինե Խողիկյան, արձակագիր, հրապարակախոս, «Գրական թերթ», խմբագրական-դիտանկյունային, քաղաքական և ազգային, բնապահպանական, «համաճարակային» և մշակութային հրապարակախոսություններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակին միջազգային, ազգային, սոցիալական ծանր հիմնախնդիրները դարձել են քառասային և համամարդկային աղետների պատճառ, որոնց անհաղորդ և անարձագանք չէր կարող լինել արձակագիր, հրապարակախոս Կարինե Խողիկյանը (**Օհանյան Լ., 2018**): Նա արդեն 13 տարի «Գրական թերթի» գլխավոր խմբագիրն է, և ավանդույթի համաձայն՝ խմբագրական-ղիտանկյունային բաժնում (նաև՝ իր ստեղծագործություններում՝ պատմվածքներում և պիեսներում) շատ հաճախ, երբեմն ժամանակի և պահի հրամայականից ելնելով, հանդես է գալիս ազգային, քաղաքական, մշակութային, նաև՝ բնապահպանական, համաշխարհային աղետների, արտագաղթի, եղեռնի և սոցիալական հարցերի բարձրաձայնմամբ, լուծումների ուղղորդմամբ:

Խողիկյան հրապարակախոսը չէր կարող չխոսել մեր ազգի հերոս-անհատների մասին, որոնք ապրում են և ապրել են մեր կողքին՝ արարելով և պահպանելով ազգային ինքնությունը՝ ապագայի համար դասեր տալով: Փաստենք, որ հրապարակախոսական հոդվածներում արձանագրված իրողություններն ու վիճարկելի քաղաքական-ազգային փաստերը տեղ են գտել նրա գեղարվեստական ստեղծագործություններում ևս: Նկատելի է, որ հրապարակախոսը մինչ 2020 թվականը՝ պատմական այս ծանր շրջափուլը, ավելի հաճախ է դիտանկյունային հոդվածներ հեղինակել. նա պատճառաբանում է՝ իր համար շատ դժվար է եղել այդ ժամանակից հետո ազգային ցավալի դրության տպավորությունների ներքո որևէ բան գրել կամ ասել (**Խողիկյան Կ., 2021, թիվ 43-44; Խողիկյան Կ., 2022 թիվ 44** և այլն):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեման արդիական է, քանի որ դիտարկելով և վերլուծելով Կ. Խողիկյանի հրապարակախոսությունը՝ ներկայացվում են և ամբողջացվում գրողի գրական-գեղարվեստական նկարագիրը: Ուսումնասիրությունը կատարվել է պատմական, համադրական-վերլուծական, համակարգային մեթոդներով:

Կարինե Խողիկյանի քաղաքական և ազգային հրապարակախոսական անդրադարձները

2018 թվականը հայ ժողովրդի համար քաղաքական ծանր, վայրիվերումներով և փոփոխություններով լի էր: «Գրական թերթի» փետրվարյան համարում Կ. Խողիկյանը «մեր անկախության տարիների մասին խոսելիս» անդրադարձել է քաղաքամայր Երևանում ոչնչացված և հողին հավասարեցված մշակութային շինությունների և կառույցների տխուր վախճանի մասին՝ որպես օրինակ բերելով արտերկրում նմանօրինակ «Հին քաղաքների» գոյության և որպես ազգային-մշակութային արժեք ընկալման ու պահպանման փաստը. «Իհարկե, տխուր է գիտակցելը, որ մեր այսօրեական մտածողությամբ ու գործելակերպով դեռ շատ հեռու ենք քաղաքակիրթ համարվելու ամենանվազագույն չափանիշից (միայն, խնդրում եմ, Կոմիտասին ու Խաչատրյանին այս պահին չհիշեք, ոչ էլ մեր այբուբենի ստեղծման ու քրիստոնեության ընդունման տարեթվերը դարձրեք կովան)» (Խողիկյան Կ., 2018, թիվ 3): Նա խոսում է նաև 21-րդ դար հասած տնակների գոյության մասին, որոնք «բազմել են քաղաքի ամենասրտում» ու դարձել յուրահատուկ «այցեքարտ». «Նայում եմ այդ շենքերին ու մտածում՝ ոչ միայն մարդ պետք է բախտ ունենա, այլև ... տները»: Խողիկյանը եզրափանում է դիտարկումը հետգրությամբ. «Իմ համեստ կարծիքով Ազգային հերոս լինելը ոչ այնքան պարզ է, որքան պատասխանատվություն: Էլ ո՞վ, եթե ոչ Ազգային հերոսը պիտի պահի-պահպանի իրեն Ազգային կոչումը շնորհած երկրի Հիշողությունը» (Խողիկյան Կ., 2018, թիվ 3):

Շարունակելով մեր ժամանակների ազգային և ժողովրդական հերոսի թեման՝ հրապարակախոս Կ. Խողիկյանը խոսում է և վերհիշում ոչ հեռու անցյալում՝ 2016 թ. հուլիսի 17-ին, Սասնա ծռեր խմբի անդամների ներխուժումը ոստիկանական զորամաս՝ քաղաքական պահանջներ ներկայացնելով կառավարությանը: Մի քանի օր փակված մնալով՝ նրանց օրվա հաց հասցրեց Արթուր Սարգսյանը կամ «հաց բերողը», որը ճեղքեց ոստիկանական պատնեշը և շրջափակված տղաներին սնունդ բերեց՝ դառնալով ծռերի «հաց բերող» հպարտությունը. «Այդ լուսաբացին Արթուրը միայն հաց չտարավ: Պատնեշից այն կողմ գտնվող Ծռերին ուժ ու կամքի անչափելի լիցք տարավ, պատնեշի այս կողմում գտնվողներին՝ դիմանալու ու դիմակայելու վճռականություն... Հայ մի՛

Արթուր Սարգսյան անունով, որ հավերժի ճամփան բռնեց որպես Հաց բերող, որը մեզ վերադարձրեց ամենամարդկային պատվիրանը» (**Խողիկյան Կ., 2018, թիվ 7; Օհանյան Լ., 2018**): Նշենք, որ Խողիկյանն այն ստեղծագործ հրապարակախոսներից է, ով անտարբեր և անհաղորդ երբեք չի եղել մեր ազգամիջյան իրադարձություններին: Այդ մասին են փաստում հեղինակի թե՛ հրապարակախոսական հոդվածները (**Խողիկյան Կ., 2016, թիվ 11; Խողիկյան Կ., 2016, թիվ 26**), թե՛ գեղարվեստական ստեղծագործությունները (**Խողիկյան Կ., 2016** և այլն), որոնցում նա տալիս է այդ ժամանակի վավերական փաստեր՝ դրանք ներկայացնելով գեղարվեստորեն և կերպարների գործուն միջնորդությամբ:

Մեր հերոս, մեր ազգի սպարապետ Վազգեն Սարգսյանին ևս մեկ անգամ հիշելով (**Խողիկյան Կ., 1994, թիվ 7; Խողիկյան Կ., 1999, թիվ 10**)՝ Կ. Խողիկյանը գրում է. «Հիմա նրան կսրբացնեն՝ որպես զոհաբերված հերոսի, հետո կգա մի ժամանակ, երբ կփորձեն սևացնել նրան ու նրա կեսագրությունը, գուցե լինի մոռացման ինչ-որ կարճ ընթացք, բայց այդ ամենը կանցնի, ու կգա Վազգեն Սարգսյանի իրական ժամանակը... Ու կգա ժամանակը՝ դրանք կօգնեն հասկանալ ու ճանաչել իսկական Վազգենին» (**Խողիկյան Կ., 2018, թիվ 8**): Հրապարակախոսը, շարունակելով իր խոսքը, հայ ազատագրված հողը համարում է «ամենակատարյալ ստեղծագործություն», իսկ երկիր օրենքների մասին հաստատականորեն հայտնում՝ դրանք «ծնվում են սահմաններում... անհրաժեշտաբար»: Համասփյուռ հայությանը կոչ է անում. «... Իրեն հայ համարող մարդը պիտի շնչի այս երկրի, այս պետականության շահերով... Հերոսին հերոս պահելը դարձել է ավելին, քան հերոսությունը» (**Խողիկյան Կ., 2018, թիվ 8**): Խողիկյանը, բացի սպարապետից, ազգային հերոսների մասին (օրինակ՝ Դուշման Վարդանի) միշտ բարձրաձայնել է իր հոդվածներում և գեղարվեստական ստեղծագործություններում՝ փառաբանելով նրանց ազգապահպան և անձնվեր կամքը (**Խողիկյան Կ., 2016, թիվ 46-47** և այլն):

Կ. Խողիկյանն ազգայի հերոսին հակադիր և հակահերոսական վերլուծական է ներկայացնում «Մի թալանիր» հրապարակախոսականում, որում բացատրում է հայ ժողովրդի տարավեկտոր «հերոսներին»: Հետաքրքրական է, որ այս հոդվածը բաժանված է մի քանի խոսույն ենթավերնագրային շարադրանքից

(«Պատմություն, որ պիտի լիներ...», «Պատմություն, որ եղավ...», «Հանցագործության անատոմիան», «Ո՞վ է պատասխանատու» և այլն), որոնց կոնտեքստում եզակի (բայց նաև՝ հազարավոր) օրինակի տեսքով տրվում է դպրոցական Նատալի Օհանյանի հուզումնառատ ու գոտեպնդող նամակի, պահապան-թալիսման խաչի և այլնի «հանգրվանը» ոչ հասցեատիրոջը: «Մարդկային ստորության դեմ անգոր են անգամ աստվածները...»,- եզրաքանում է Խողիկյանը և հուսառատ նոտայով ավարտում հոդվածը.- ...Մնում է՝ հետևողական լինենք նոր Հայաստան կառուցելու մեր երազանք-իրողությանն ու հասնենք այն օրվան, երբ մենք՝ ՀՀ քաղաքացիներս, դատաստան կտեսնենք երկիրը թալանող գանձագողերի նկատմամբ՝ պարզապես դուրս վանելով նրանց մեր իրականությունից...» (Խողիկյան Կ., 2018, թիվ 21):

«Անցնել կրակի, ջրի, պղնձյա փողերի միջով» հրապարակախոսականում Խողիկյանը, անդրադառնալով 2018 թ. թավշյա հեղափոխությանը, հավաստում է. «Այսօր այդ ամենը իրականություն է»: Նաև՝ հստակ բարձրաձայնում. «... չլրկնենք անցյալի սխալները... Մենք այլևս սխալվելու իրավունք չունենք» (Խողիկյան Կ., 2018, թիվ 36): Ի դեպ, Կ. Խողիկյանը հեղափոխության մասին նաև անդրադարձել է խմբագրական դիտանկյուն-հրապարակախոսականներում (Խողիկյան Կ., 2018, թիվ 14-15, Խողիկյան Կ., 2019, թիվ 4), «Թավշյա հեղափոխության հակաթավիշը» հոդվածում (Խողիկյան Կ., 2018, թիվ 33):

Կ. Խողիկյանը սրտի ցավով է անդրադառնում տարիներ շարունակ հայկական բանակում զինվորի մահվան, «ինքնասպանության» դեպքերին՝ ներկայացնելով այն ծնողներին, որոնք իրենց միևնույն օրիցներին ուղղարկում են ծառայության՝ չգիտենալով հետագա ճակատագիրը. «Անպատմելի ցավ է, երբ զավակդ մահանում է թշնամու գնդակից, բայց ցավի հետ մխիթարանք կա՝ երկիրն է պաշտպանել, ծնողներին ու իր տունն է պաշտպանել...»: «... ավելացնեմ՝ չեմ հիշում մի դեպք, երբ զինվորի մահվան համար պատասխանատվություն կրի նրա անմիջական հրամանատարը, էլ չեմ ասում բարձրաստիճան չինովնիկների... հրաժարականների մասին» (Խողիկյան Կ., 2020, թիվ 2),- գրում է հրապարակախոսը:

Այս թեմային բովանդակային լրացնում է Խողիկյանի «Շուշի» դիտանկյունային հրապարակախոսականը, որում անդրադառնում է 28 տարվա Շուշիի ազատագրմանը՝ հիշելով տարիներ առաջ տեղի ունեցած պատմական պահը. «... Բեմ եկան մշակույթի նախարար, բանաստեղծ Հակոբ Մովսեսն ու արձակագիր Սևադա Սևանը: Այսօր էլ ունկերումս նրանց՝ հուզմունքից բեկվող, հպարտությունից պայթող խոսքն է. «Վեց հարյուր տարի անց մենք հաղթանակ ենք տարել՝ քաղաք ենք ազատագրել՝ մեր Շուշի՛ն»» (Խողիկյան Կ., 2020, թիվ 15): Այս հոդվածը հրապարակախոսն ավարտում է հետաքրքիր դրվագային հետզոությամբ. «2000-ականների սկզբին էր: Իմ մեծ հայրենակցի՝ ԽՍՀՄ և ՀՀ ռազմական գործիչ, գեներալ-գնդապետ ու մեծատառով մարդ Գուրգեն Դալիբալայանի հետ հերթական հանդիպման ժամանակ, երբ խոսք բացվեց Շուշիի մասին, հարցրի՝ «Քանի տարի է անցել, հիմա ի՞նչ կասեք այդ օրվա մասին»: Լռեց... հետո՝ «Էդ օրվա համար արժեք ծնվել ու մեռնել...»»:

Պատերազմաքաղաքական անցուղարձների և գնահատականների մասին է Կ. Խողիկյանի դիտանկյունային «Երեք մարտահրավերների խաչմերուկում» հրապարակախոսականը, որտեղ հեղինակը համարձակություն է հանձնառում ասելու՝ «այս օրերին Հայաստանը գտնվում է երեք մարտահրավերների խաչմերուկում». դրանք են՝ «Պատերազմ», «Դիվերսիա», «Ինքնառնչացում...»: Այս խորագրային բաժիններում հեղինակն արձանագրում է. առաջին՝ «Պատերազմը հայտարարված է Երկիր մոլորակին...», երկրորդ՝ «Սա արդեն ու վաղուց քաղաքական պայքար չէ, սա մի անուն ունի՝ դիվերսիա՝ երկրի թիկունքում, յուրայինների դեմքով...», երրորդ՝ «Թե ինչ ավարտ են ունենում պատերազմներն ու դիվերսիաները, մարդկության պատմությունը վաղուց է տվել պատասխանը: Մնաց երրորդը...» (Խողիկյան Կ., 2020, թիվ 19):

Խողիկյանը դեռ 2020 թվականի հուլիսին կանխագգացել է սպասվող ադետալի 44-օրյա պատերազմը՝ գրելով «Գոնե լուռ մնացեք» հոդվածը՝ կոչ անելով միշտ զգոն և աչալուրջ լինել՝ չնայած սահմանային հարաբերական խաղաղությանը. «Մենք, Հայաստան երկիրն ու մեզանից ամեն մեկը, պատերազմի մեջ ենք... պատերազմ է, որը կարող է մի օր կեղծ ընդարմացումից արթնանալ և մի

Ուազով բորբոքել անթեղված կրակը»: Դրա համար ցանկացած փոփոխական իրավիճակում միակ փրկությունը «... Հայաստան երկիրն ու մեզանից ամեն մեկը ԹԻԿՈՒՆՔ պիտի լինի Մեր անկախության, պետականության, խաղաղ օրվա պաշտպանին՝ հարազատ բանակին պիտի թիկունք լինի գործով, արարքով, խոսքով...» (Խոդիկյան Կ., 2020, թիվ 25):

Հետաքրքրական է, որ հրապարակախոսը 44-օրյա պատերազմից հետո գրեթե դիտանկյունային հոդվածներով չի ներկայացել «Գրական թերթում»: Պատճառը. «Այդ ապրելը... Եռաբլուրում ծածանվող դրոշներով, գերության մեջ տառապող մեր եղբայրներով, մինչև վերջին շունչը կսկիծ-սուգը հանապազօր հացի հետ համատեղող, մեր կողքին ապրող ծնողներով ու հարազատներով, մարմնով ու հոգով հաշմված՝ պատերազմով անված հազարավոր երիտասարդներով, կոկորդներումս խցանված պարտության դառնահամով... Իսկ մենք ապրում ենք՝ ամեն օրվա հետ բացահայտելով մեր թանկ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ էժան մսխելու հերթական որոգայթը...» (Խոդիկյան Կ., 2021, թիվ 43-44): Խոդիկյանն այս պատերազմի մասին «Արթնացում» վերնագրով պատումային ստեղծագործություն ունի «Գրական թերթի» 2022 թվականի 24-րդ համարում:

2022թ. «Գրական թերթի» դեկտեմբերյան դիտանկյունային հրապարակախոսականում Խոդիկյանը խոստովանում է. «2022 թվականը 2020-ի նոյեմբերի 9-ից սկսված և մինչև այս տողերը գրելուս պահը 24/7 ռեժիմով ընթացող բացահայտում-ախտորոշումների շարունակությունն է: Երբ բարեկամը վերածվում է չարակամի, դաշնակիցը՝ հակառակորդի...»: Նաև հաստատականորեն շեշտադրում. «Առանց Հայաստանի Հանրապետության չկա Արցախ, չկա Սփյուռք: Մեր միակ ու անդավաճան դաշնակիցը մենք ենք: Մեր միակ պաշտպանը մեր բանակն ու մեր զինվորն է: Մեր երկիրը պիտի ոտքի կանգնեցնենք միայն անձնագոհ ու արդար աշխատանքով: Եվ ամենակարևորը. ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵՐ ԼԵԶՈՒՆ, ՄԵՐ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՆՔ ԶԻԶԻ ՈՉ ՄԵԿԻՆ» (Խոդիկյան Կ., 2022, թիվ 44): Քանի որ այս դիտանկյունային հոդվածն ամանորյա հրապարակում է, ուստի հետգրության մեջ Խոդիկյանը նշում է. «... կյանքը շարունակվում է... ամա-

նորյա հրաշքի սպասումով...»: Նմանօրինակ հրապարակում ունի հեղինակը նաև 2023 թ. տարեվերջին (**Խողիկյան Կ., 2023, թիվ 44**):

Կարինե Խողիկյանի բնապահպանական, «համաճարակային» և մշակութային հրապարակախոսական անդրադարձները

Հրապարակախոս Կ. Խողիկյանն իր դիտանկյունային հոդվածներում անդրադարձել է նաև բնապահպանական, 2020 թվականի «համաճարակ/պանդեմիային», արդեն ավանդույթի ուժ ունեցող մշակութային մի շարք խնդիրների՝ վերծանելով և բարձրաձայնելով ազգին հուզող ցավերն ու շարունակական բացթողումները:

Ելնելով իրողությունից և քաղաքային անլուծելի ու մինչ այսօր շարունակվող վիճարկելի հարցերից՝ Կ. Խողիկյանը կրճատումներով կրկին հրատարակում է դեռևս 2002-ին «Գրական թերթում» հրատարակած հոդվածի՝ «Օպերան, սրճարանները, մենք: Մե՞նք...» (**Խողիկյան Կ., 2002, թիվ 25**) «վերաթողարկված» «Օպերայի վերադարձը» վերնագրային խրոնիկան՝ արձանագրելով. «... Ինչ է, սրանից առաջ ու նաև հետո, քի՞չ անօրինական շինություններ են կառուցվել, մեկի տան պարսպի համար պակաս կանաչ տարածք է «մատաղ արվել», ամենաանհեթեթ, անգամ մարդկանց կյանքին սպառնացող տեղերում քի՞չ բենզալցման կետեր են բուսնել...»: Հրապարակախոսության վերջում արձանագրում է. «Իսկ ընդհանրապես, ի՞նչն է քոնը այս քաղաքում, եթե վճարել չես կարող...» (**Խողիկյան Կ., 2019, թիվ 8**):

Հրապարակախոսություններից մեկում դիտանկյունային անդրադարձ կա Ամուլսարի բնապահպանական և աղետավտանգ փաստի արձանագրման մասին: Խոսելով բնական պաշարների շահագործումից՝ Խողիկյանը ընդգծում է, որ «Ժառանգելու» ենք հիվանդ տարածաշրջան՝ «թունավոր, ախտածին ու դարերով անբուժելի»: Ամփոփում է. «... ամեն մեկիս ասելիքն անսպառ է՝ ամեն մեկիս չափով... այսքանից հետո միակ բանական միտքը, որ կարող եմ ու պարտավոր եմ հայտնել՝ **Ամուլսարը պիտի սար մնա**» (**Խողիկյան Կ., 2019, թիվ 27**): Ի դեպ, Ամուլսարի բնապահպանական հարցերը նաև գեղարվեստական հանգուցալուծում

են գտել Խոդիկյանի «Ջուր» ֆանտաստիկ աբսուրդ պիեսում, որը գրվել է 2019 թ. հոկտեմբեր-նոյեմբերին (**Խոդիկյան Կ., 2020, թիվ 60-61**):

Կ. Խոդիկյանը դիտանկյունային հոդվածների, ինչպես նաև՝ «Քովիդ-քրոնիկոն»¹ օրագրային շարք է հրապարակել «Գրական թերթի» 2020 թվականի որոշ համարներում՝ մանրամասն անդրադառնալով համաճարակի սկզբնական ընթացքին, մեր առօրյայի խաթարմանը, մարդկային ռեժիմային կենսակերպին: Նա համոզված է, որ այս փորձությունն էլ է հաղթահարվելու. «... մի ճշմարտություն կա այս արևի տակ, որ քննարկման ենթակա չէ՝ համամարդկային գրությունն է այն մեկնակետը, որից սկսվում է մահվան փորձության դեմ մղվող կյանքի պայքարը» (**Խոդիկյան Կ., 2020, թիվ 8-9**): Հոդվածին լրացնելու են գալիս Կ. Խոդիկյանի «քրոնիկոնային» օրագրությունները, որոնցում մեկնաբանում է ախտի տարածումը և առօրյայի համակեցությունը, դժվարին և փորձություններով լի հաղթահարումները (**Խոդիկյան Կ., 2020, թիվ 11**), նաև՝ «Մեկուսացման մտորումներ», «Մնա տանը», «Կարանտինային «պատահարներ» շարքից» փոքրիկ-քրոնիկային դիպային պատմությունները՝ եզրակացնելով. «... ավելացնեմ, որ պանդեմիան ոչ միայն «լինել-չլինելու» հարց է՝ մոլորակի մասշտաբով, այլ նաև (իսկ գուցե առաջնահերթ) նոր իրավիճակում մարդկանց համարժեք վարքի, իմացության, վտանգի աստիճանը գրագետ գնահատելու կարողություն» (**Խոդիկյան Կ., 2020, թիվ 12**):

Այս թեմա-հրապարակախոսականների բովանդակային լրացումն է «Ջրային զինադադար» դիտանկյունային հոդվածը, որտեղ Խոդիկյանը կրկին անդրադառնում է «կորոնավիրուսային պանդեմիային»՝ հիշելով հանրահայտ «Մաուզլի» մուլտֆիլմի այն դրվագը, երբ ջունգլիներ է գալիս մեծ երաշտը, և հայտարարվում է «ջրային զինադադար»: «Այս համաճարակը, մարդկանց տներում փակելով, բացել է բնության շունչը. օդը, երկինքը, ջուրը մաքրվում-գուլավվում են,-

¹ «Քովիդ-քրոնիկոն» շարքն այդ ժամանակափուլում «Գրական թերթում» հետաքրքիր դիտանկյունային բաժին է դարձել, որտեղ իրենց «համաճարակային» մտորումները, խոհերը, վախերն ու կեցության մասին են ներկայացրել թերթի հավատարիմ թղթակից-գրողները (այս մասին առավել մանրամասն տե՛ս «Գրական թերթի» 2020 թվականի որոշ համարներում):

փաստում է հեղինակը և ինքնախոստովանում.- Ինչո՞ւ ես՝ այդքան միամիտս, կարծում էի, որ աղետը, թեկուզ ժամանակավոր, «ջրային զինադադար» կբերի մեր տուն, որ կարողանանք դիմագրավել այս փորձությանը ևս...» (**Խողիկյան Կ., 2020, թիվ 14**): Ի դեպ, 2020 թ. մայիսի 15-ի դիտանկյունային հրապարակախոսականում Կ. Խողիկյանը «Կորոնավիրուսային ազնվություն» դրվագային մի պատահարային իրավիճակով ևս անդրադարձել համաճարակին՝ ներկայացնելով բացթողումների և գիտակից քաղաքացու ազնվությանը՝ բարձրաձայնելով. «Իլֆ-Պետրովյան մերօրյա երկնագույն գողն էլ ինչպե՞ս է լինում...» (**Խողիկյան Կ., 2020, թիվ 16**):

Դիտանկյունային հոդվածային-քննարկումներից է հայերենը որպես պետական լեզու օրենսդրորեն լինելու փաստը, որին մասնակցել և «արագ ու ազնիվ» արձագանքել են Կ. Խողիկյանի գրչընկերները, քանի որ «մեզ միավորողը մեր երկիրն է, նրա այսօրն ու վաղվա օրը» (**Խողիկյան Կ., 2022, թիվ 20**): Խողիկյանը փաստում է, որ «... մեր պետությունը այսօր վտանգված են...»:

2023թ. «Գրական թերթի» հնգամյա հաշվետվություն-հոդվածում Կ. Խողիկյանը գրում է. «... Հինգ տարիների հետահայաց, թեկուզ հպանցիկ վերլուծությունը վկայում է ոչ միայն «Գրական թերթի», այլև մեր գրական մամուլի առջև ծառացած բարդ, դժվարին հիմնախնդիրների մասին. քովիդ, 44-օրյա պատերազմ, որը նոյեմբերի 9-ից հետո էլ շարունակվում է առ այսօր՝ պրոքսի պատերազմի օրակարգով, Արցախի բռնի տեղահանություն...»: Թերթը եղել է այն հարթակը, որտեղ գրական-գեղարվեստական համայնքը ներկայացել և ներկայացվել է իր խնդիրներով ու ստեղծագործական ընթացքի և զարգացման միտումներով: Խողիկյանը իր երախտագիտությունն է հայտնում բոլոր հեղինակներին՝ առանց հոնորարի իրենց ստեղծագործությունները տրամադրելու և վստահելու համար (**Խողիկյան Կ., 2023, թիվ 39**): Այս հաշվետվությունում նա՝ որպես թերթի գլխավոր խմբագիր, անդրադարձել է նաև պարբերականի հաստիքային, ֆինանսական և աշխատասենյակի մի շարք հարցերի:

2024 թ. հրապարակված «Մշակույթի հիշողություն թե՞ հիշողության մշակույթ» անդրադարձային հոդվածում Կ. Խողիկյանը, զբոսանք-քայլերթի ընթացքում անցնելով արդեն իսկ ծանոթ Հին Երևանի փողոցներով, ականատես է

լինում ներկա և վերափոխված մայրաքաղաքի, ինչպես նաև հին ու նոր շենք-շինությունների քարեհիշողության, մշակութային, կրթական կենտրոն-օջախների վերափոխման պատմությանը և այլն: Հետգրումային հարցնում է. «Մենք դեռ երկա՞ր ենք առաջնորդվելու «ամեն ինչ հիմքերից քանդելու և մերն ու նոր կառուցելու» սինդրոմով... «Լավագույն ավանդույթները» շարունակվո՞ւմ են» (**Խողիկյան Կ., 2024, թիվ 8**): Հոդվածագիրը Երևանի և մայրաքաղաքային առօրյայի մասին մշակութային անդրադարձ է կատարել նաև այլ հոդվածներում (**Խողիկյան Կ., 2013, թիվ , Խողիկյան Կ., 2016, թիվ 6** և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, արձակագիր Կարինե Խողիկյանի հրապարակախոսական հոդվածները փաստում են և ներկայացնում մեր օրերում ու մեր կողքին տեղի ունեցող մի շարք կենսական դրվագներ, պատմական-քաղաքական շրջափուլային իրողություններ, որոնք պետք է բարձրաձայնել և տալ հիմնավոր պատասխաններ: Քննարկելով արդի հիմնախնդիրներ՝ հեղինակը կարողանում է տալ ժամանակի դիմապատկերը, որում գործուն մասնակցություն ունեն մեր օրերի մարդիկ, իսկ ազգային հերոս-կերպարները և իրադրությունները դառնում են Խողիկյան արձակագրի գեղարվեստական-հրապարակախոսական երկերի հիմնաքարը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Խողիկյան Կ. (1994)**, «Ավելի լավ է մեկ մոմ վառել, քան բողոքել խավարից» (հարցազրույց), «Գարուն» ամսագիր, Երևան, թիվ 7, էջ 22-27:
2. **Խողիկյան Կ. (1999)**, Հրաշալի գործեր էր գրելու..., «Գարուն» ամսագիր, Երևան, թիվ 10, էջ 28:

3. **Խոդիրյան Կ. (2002)**, Օպերան, սրճարանները, մենք: Մենք..., «Գրական թերթ»², Երևան, թիվ 25:
4. **Խոդիրյան Կ. (2013)**, Դիտանկյուն, «Գրական թերթ», Երևան, թիվ 25:
5. **Խոդիրյան Կ. (2016)**, Մեծ եռագրություն: Արձակ, Երևան, «Արմավ» հրատ.:
6. **Խոդիրյան Կ. (2016)**, Դիտանկյուն, «Գրական թերթ», Երևան, թիվ 6, թիվ 11, թիվ 26:
7. **Խոդիրյան Կ. (2016)**, Ուղեկալ տանող ճանապարհը (պատմություն, որ կարող էր լինել՝ 2 գործողությամբ և վերջնարարով), «Դրամատուրգիա. գրական-գեղարվեստական հանդես», Երևան, թիվ 46-47, էջ 42-67:
8. **Խոդիրյան Կ. (2018)**, Դիտանկյուն, «Գրական թերթ», Երևան, թիվ 3, թիվ 7, թիվ 8, թիվ 14-15:
9. **Խոդիրյան Կ. (2018)**, Մի՛ թալանիր, «Գրական թերթ», Երևան, թիվ 21:
10. **Խոդիրյան Կ. (2018)**, Թավշյա հեղափոխության հակաթավիշը, «Գրական թերթ», Երևան, թիվ 33:
11. **Խոդիրյան Կ. (2019)**, Դիտանկյուն, «Գրական թերթ», Երևան, թիվ 4, թիվ 8, թիվ 27:
12. **Խոդիրյան Կ. (2020)**, Դիտանկյուն, «Գրական թերթ», Երևան, թիվ 2, թիվ 8-9, թիվ 14, թիվ 15, թիվ 16, թիվ 19, թիվ 25:
13. **Խոդիրյան Կ. (2020)**, Քովիդ-քրոնիկոն, «Գրական թերթ», Երևան, թիվ 11, թիվ 12:
14. **Խոդիրյան Կ. (2020)**, Ջուր. ֆանտաստիկ արտուրդ պիես, «Դրամատուրգիա. գրական-գեղարվեստական հանդես», Երևան, թիվ 60-61, էջ 28-49:
15. **Խոդիրյան Կ. (2021)**, Դիտանկյուն, «Գրական թերթ», Երևան, թիվ 43-44:
16. **Խոդիրյան Կ. (2022)**, Դիտանկյուն, «Գրական թերթ», Երևան, թիվ 20, թիվ 44:
17. **Խոդիրյան Կ. (2022)**, Արթնացում, «Գրական թերթ», Երևան, թիվ 24:
18. **Խոդիրյան Կ. (2023)**, Հաշվետվություն, «Գրական թերթ», Երևան, թիվ 39:

² Հոդվածում հղված «Գրական թերթի» էլեկտրոնային բոլոր համարները հասանելի են <https://tert.nla.am/mamul/Grakantert/NLA.html> գրահավաքային կայքէջում և <https://www.grakantert.am/> կայքում:

19. **Խոդիկյան Կ. (2023)**, Դիտանկյուն, «Գրական թերթ», Երևան, թիվ 44:
20. **Խոդիկյան Կ. (2024)**, Մշակույթի հիշողություն թե՛ հիշողության մշակույթ, «Գրական թերթ», Երևան, թիվ 8:
21. **Օհանյան Լ. (2018)**, Կարինե Խոդիկյանի ստեղծագործական աշխարհը, Երևան, Հեղ. հրատ.:

REFERENCES

1. **Khodikyan K. (1994)**, «Aveli lav e' mek mom var'el, qan boghoqel xavaric» /“It is better to light one candle than to complain about the darkness”/ (interview), “Garun” magazine, Yerevan, № 7, pp. 22-27.
2. **Khodikyan K. (1999)**, Hrashali gorc'er e'r grelow... /He would write wonderful works.../, “Garun” magazine, Yerevan, № 10, p. 28.
3. **Khodikyan K. (2002)**, O'peran, srtwarannery', menq: Me' nq... /The Opera, the cafes, us. us?.../, “Literary newspaper”, Yerevan, № 25.
4. **Khodikyan K. (2013)**, Ditankyown /Perspective/, “Literary newspaper”, Yerevan, № 25.
5. **Khodikyan K. (2016)**, Mec' er'agrowt'yown: Ard'ak /The Great Trilogy. Prose/, Yerevan, “Armar” Publishing House.
6. **Khodikyan K. (2016)**, Ditankyown /Perspective/, “Literary newspaper”, Yerevan, № 6, № 11, № 26.
7. **Khodikyan K. (2016)**, Owghekal tanogh twanaparhy' (patmowt'yown, or karogh e'r linel` 2 gorc'oghowt'yamb & verjnararov) /The road to escort (a story that could have been, with 2 acts and a finale)/, “Dramaturgy. literary and artistic journal”, Yerevan, № 46-47, pp. 42-67.
8. **Khodikyan K. (2018)**, Ditankyown /Perspective/, “Literary newspaper”, Yerevan, № 3, № 7, № 8, № 14-15.
9. **Khodikyan K. (2018)**, Mi' t'alanir /Do not rob/, “Literary newspaper”, Yerevan, № 21.

10. **Khodikyan K. (2018)**, T'avshya heghap'oxowt'yan hakat'avishy' /The anti-velvet of the velvet revolution/, "Literary newspaper", Yerevan, № 33.
11. **Khodikyan K. (2019)**, Ditankyown /Perspective/, "Literary newspaper", Yerevan, № 4, № 8, № 27,
12. **Khodikyan K. (2020)**, Ditankyown /Perspective/, "Literary newspaper", Yerevan, № 2, № 8-9, № 14, № 15, № 16, № 19, № 25.
13. **Khodikyan K. (2020)**, Qovid-qronikon /Covid-chronicle/, "Literary newspaper", Yerevan, № 11, № 12.
14. **Khodikyan K. (2020)**, Jowr. fantastik absowrd pies /Water: A fantastic absurd play/, "Dramaturgy: literary and artistic journal", Yerevan, № 60-61, pp. 28-49.
15. **Khodikyan K. (2021)**, Ditankyown /Perspective/, "Literary newspaper", Yerevan, № 43-44.
16. **Khodikyan K. (2022)**, Ditankyown /Perspective/, "Literary newspaper", Yerevan, № 20, № 44.
17. **Khodikyan K. (2022)**, Art'nacowm /Awakening/, "Literary newspaper", Yerevan, № 24.
18. **Khodikyan K. (2023)**, Hashvetvowt'yown /Report/, "Literary newspaper", Yerevan, № 39.
19. **Khodikyan K. (2023)**, Ditankyown /Perspective/, "Literary newspaper", Yerevan, № 44.
20. **Khodikyan K. (2024)**, Mshakowyt'i hishoghowt'yown t'e^o hishoghowt'yan mshakowyt' /Cultural memory or culture of memory/, "Literary newspaper", Yerevan, № 8.
21. **Ohanyan L. (2018)**, Karine Xodikyani steghc'agorc'akan ashxarhy' /Karine Khodikyan's creative world/, Yerevan, Author's publication.

Liana Ohanyan

Karine Khodikyan's editorial-aspectual and publicistical thoughts in the newspaper
“Grakan Tert” (2018-2024)

Conclusion

Keywords and expressions: *Karine Khodikyan, prose writer, publicist, “Grakan Tert” editorial-aspectual, political and national, ecological, “epidemiological” and cultural publicism.*

Karine Khodikyan-modern prose writer, dramatist, publicist, translator, chief editor of the newspaper “Grakan Tert” (“Literary Newspaper”) has repeatedly addressed the problems of the modern Armenian literature, culture, art, and, of course, the political and national (emigration, genocide) problems which were raised from one year to the next in a number of her editorial materials and articles on culture. In recent years, especially from 2018 to 2024, these articles were published mainly in the different issues of the newspaper “Grakan Tert”, in accordance with the imperatives of the time and political situation of the country.

This article presents and analyzes all the writings of the publicist Khodikyan, written during the period under review, concerning political, national, ecological, cultural and other themes, which are of debatable and aspectual nature as well as touch current problems and contemporary events that trouble people of our days. These articles are part of K. Khodikyan's works and they complete literary and artistic portrait of the writer.

Լիանա Օգանյան

Редакционно-аспектные и публицистические размышления

Карине Ходикян в газете “Гракан терт” (2018-2024 гг.)

Заключение

Ключевые слова и выражения: Карине Ходикян, прозаик, публицист, “Гракан терт”, редакционно-аспектный, политический и национальный, экологический, “эпидемиологическая” и культурная публицистика.

Современный армянский прозаик, драматург, публицист, переводчик, главный редактор газеты “Гракан терт” (“Литературная газета”) Карине Ходикян неоднократно обращалась к проблемам современной армянской литературы, культуры, искусства и, конечно, политическим и национальным (эмиграция, геноцид) проблемам, которые поднимались из года в год в ряде ее редакционных материалов, статей о культуре. В последние годы, особенно в 2018-2024 гг., они в основном нашли место в разных номерах газеты “Гракан терт”, исходя из императивов времени и политической ситуации в жизни нации.

В данной статье представлены и проанализированы все статьи Ходикян-публициста, написанные в рассматриваемый период, относительно политических, национальных, экологических, культурных и других тем, которые имеют дискуссионный и аспектный характер, а также касаются актуальных проблем и современных событий, волнующих человека наших дней. Эти статьи составляют часть творчества К. Ходикян, делая целостным литературно-художественный портрет писателя.

Լիանա Օհանյան- «Պատմաբանասիրական հանդես» ամսագրի պատասխանատու քարտուղար: Գիտական հետաքրքրությունները՝ արդի հայ գրականություն: Հեղինակ է 1 մենագրության և 10 հոդվածի: ORCID:0009-0002-0099-9670. liana83ok@gmail.com.

Liana Ohanyan - Executive Editor of the “Historical and Philological Journal” of NAS RA. Scientific interests: modern Armenian literature. Author of 1 monograph and 10 articles. ORCID:[0009-0002-0099-9670](https://orcid.org/0009-0002-0099-9670). liana83ok@gmail.com

Лиана Оганян - Ответственный секретарь «Историко-филологический журнала» НАН РА. Научные интересы: современная армянская литература. Автор 1 монографии и 10 статей. ORCID:[0009-0002-0099-9670](https://orcid.org/0009-0002-0099-9670). liana83ok@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 06.05.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.05.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 30.12.2025թ.